

Սույն ԾԱՆ-ի թարգմանությունը հիմնված է 2014թ. մարտի 3-ով թվագրված՝ անգլերեն տարբերակի վրա:



## Ծրագրի ամփոփ նկարագիր

Ծրագրի ամփոփ նկարագրերը (ԾԱՆ) պարունակում են ծրագրի մասին համառոտ տեղեկատվություն: Քանի որ ԾԱՆ-ը իրենից ներկայացնում է ընթացիկ աշխատանք, հնարավոր է, որ սկզբնական տարբերակում ներառված չլինեն որոշ տեղեկություններ, սակայն, երբ այդպիսի տեղեկություններ հասանելի դառնան, դրանք նույնպես կավելացվեն: Առաջարկվող ծրագրերի մասին տեղեկատվությունը նախնական և ուղղորդող բնույթ է կրում:

<b>ԾԱՆ-ի ստեղծման ամսաթիվը</b>	-
<b>ԾԱՆ-ը թարմացվել է</b>	2014թ. փետրվարի 25-ին
<b>Ծրագրի անվանումը</b>	Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր
<b>Երկիր</b>	Հայաստան
<b>Ծրագրի համարը</b>	46220-001
<b>Կարգավիճակ</b>	Առաջարկված
<b>Աշխարհագրական դիրքը</b>	Հայաստան
<p>Երկրի համար որևէ ծրագիր կամ ռազմավարություն պատրաստելիս, որևէ ծրագիր ֆինանսավորելիս, կամ սույն փաստաթղթում որևէ կերպ նշելով կամ հղում անելով կոնկրետ աշխարհագրական տարածքին, Ասիական Զարգացման Բանկը մտադրություն չունի որևէ դատողություններ անել որևէ տարածքի իրավաբանական կամ այլ կարգավիճակի վերաբերյալ:</p>	
<b>Դասակարգում ըստ ոլորտի կամ ենթաոլորտի</b>	Բազմաոլորտ / Բազմաոլորտ
<b>Թեմատիկ դասակարգում</b>	Կարողությունների զարգացում Տնտեսական աճ Կառավարում
<b>Գենդերային միավորման կարգեր</b>	Գենդերային բաղադրիչ չի պարունակում

## ■ Ֆինանսավորում

Աջակցության տեսակ/տարբերակ	Հաստատման համարը	Ֆինանսավորման աղբյուրը	Հաստատված գումարը (հազարներով)
Տեխնիկական աջակցություն	–	Տեխնիկական աջակցության հատուկ հիմնադրամ	900
Վարկ	–	Ասիական զարգացման հիմնադրամ	49,000
<b>Ընդամենը</b>			<b>ԱՄՆ\$ 49,900</b>

## ■ Երաշխիքների դասերը

Երաշխիքների դասերին մանրամասն ծանոթանալու համար այցելե՛ք.  
<http://www.adb.org/site/safeguards/safeguard-categories>

Բնապահպանություն	C
Ստիպողական վերաբնակեցում	C
Բնիկ ժողովուրդներ	C

## ■ Բնապահպանական և սոցիալական խնդիրների ամփոփագիր

### Բնապահպանական ասպեկտներ

Սա ծրագրային վարկ է, որը կսատարի Հայաստանի ճանապարհային և ջրային ոլորտների ֆինանսական և ադմինիստրատիվ կառավարման բարելավումը: Այն չունի ներդրումային կամ ծրագրային որևէ բաղադրիչ, որը կարող է առաջացնել երաշխիքներից որևէ մեկի կիրառման անհրաժեշտությունը:

### Պարտադրված վերաբնակեցում

Սա ծրագրային վարկ է, որը կսատարի Հայաստանի ճանապարհային և ջրային ոլորտների ֆինանսական և ադմինիստրատիվ կառավարման բարելավումը: Այն չունի ներդրումային կամ ծրագրային որևէ բաղադրիչ, որը կարող է հանգեցնել պարտադրված վերաբնակեցմանը:

### Բնիկ ժողովուրդներ

Սա ծրագրային վարկ է, որը կսատարի Հայաստանի ճանապարհային և ջրային ոլորտների ֆինանսական և ադմինիստրատիվ կառավարման բարելավումը: Այն չունի ներդրումային կամ ծրագրային որևէ ուղղակի բաղադրիչ, որն ազդեցություն կունենա բնիկ ժողովուրդների վրա:

## ■ **Հաղորդակցություն շահագրգիռ կողմերի հետ, նրանց մասնակցությունն ու խորհրդատվությունը**

### **Ծրագրի նախագծման փուլում**

Ծրագրի հիմնական շահագրգիռ կողմերը ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ոլորտի շահառուներն են, ինչպես նաև Ֆինանսների նախարարությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, Տրանսպորտի և կապի նախարարությունը, Տարածքային կառավարման նախարարությունը, Ջրային տնտեսության պետական կոմիտեն, ջրամատակարարման և ճանապարհային տրանսպորտի ծառայությունների և ենթակառուցվածքների՝ մասնավոր հատվածի մատակարարները: 2013 թ. մարտից մինչև օգոստոսն ընկած ժամանակահատվածում սեմինարների, ֆոկուս խմբային քննարկումների, աշխատանքային խմբի հանդիպումների ժամանակ այս շահագրգիռ կողմերի հետ պարբերաբար անցկացվել են լայնածավալ խորհրդակցություններ քաղաքականության պայմանների և իրականացման ժամանակացույցի վերաբերյալ:

### **Ծրագրի իրականացման փուլում**

–

## ■ **Նկարագիր**

Ասիական Ջարգացման Բանկը (ԱԶԲ) համագործակցություն կհաստատի Հայաստանի Կառավարության հետ (կառավարություն)՝ ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի (ծրագիր) շրջանակներում ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ծառայությունների բարելավման նպատակով: Ծրագիրը կաջակցի Կառավարության՝ կայուն ենթակառուցվածքների ապահովման միջոցով զարգացման նպատակներին, որոնք սահմանված են. «Հայաստանի Հանրապետության 2013 – 2025թթ հեռանկարային զարգացման ռազմավարության նախագծում», 2013-2015թթ. Միջնաժամկետ ծախսերի ծրագրում և Հայաստանի Հանրապետության Կառավարության Ծրագրում: Այն նաև սերտորեն ներդաշնակեցված է «ԱԶԲ Ռազմավարություն 2020»-ի, «Ջրային ոլորտի գործառնական ծրագիր 2011–2020»-ի, «Կայուն տրանսպորտի նախաձեռնության գործառնական ծրագրի» և «Հայաստանում ԱԶԲ 2012–2013թթ. գործողությունների բիզնես ծրագրի» լրամշակված տարբերակում նախասահմանված և զարգացմանն ուղղված գերակայությունների հետ: ԱԶԲ-ն համագործակցում է կառավարության հետ ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ոլորտներում, ինչպես նաև քաղաքականության վրա հիմնված վարկերի շուրջ:

## ■ Ծրագրի հիմնավորումը և կապը երկրի/տարածաշրջանի ռազմավարության հետ

Բարելավված ենթակառուցվածքների միջոցով արձանագրվող տնտեսական աճը կառավարության՝ զարգացմանը միտված գերակայություններից է: Հայաստանում արագորեն հնանում են ենթակառուցվածքային ակտիվները, իսկ դրանց հիմնանորոգման կամ նորերով փոխարինման համար անհրաժեշտ ռեսուրսները ավելի ու ավելի սահմանափակ են դառնում: Ճանապարհային և ջրային ոլորտներն առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում տնտեսության և կյանքի որակի վրա դրանց ունեցած ազդեցության շնորհիվ: Երկու ոլորտներն էլ խիստ թերֆինանսավորված են, իսկ կառավարության՝ երկարաժամկետ պլանավորման և ոլորտի կառավարման կարողությունները սահմանափակ են: Ճանապարհային ոլորտում ընթացիկ ծախսերի բյուջեի և հիմնականում զարգացման գործակալությունների կողմից ֆինանսավորվող կապիտալ ծախսերի միջև ճեղքվածքը մեծանում է: Ջրային ոլորտի հնացող գույքը հնարավոր չէ պահպանել բավարար մակարդակում՝ առկա սահմանափակ ֆինանսավորման և ներկայումս սահմանված սակագների պայմաններում: Ճանապարհների վատ կամ անբավարար վիճակը սահմանափակում է մարդկանց հասանելիությունը շուկաներին, առողջապահական և կրթական հաստատություններին: Տնտեսական նշանակություն ունեցող կենտրոնների շրջակայքում ավելի լավ պահպանվող ճանապարհային ցանցերի առկայությունը կարող է բարելավել հասանելիությունը և հնարավորություն ստեղծել այս քաղաքատիպ կամ գյուղական վայրերի բնակչության տնտեսական ինտեգրման համար: Մաքուր ջրի հուսալի մատակարարումը անմիջապես դրականորեն կազդի բնակչության առողջության վրա: Ծրագրի մշակման նախապատրաստման փուլում ոլորտի՝ բարելավված կառավարման և ծառայությունների մատուցման համար սահմանվեցին հետևյալ նախապայմանները. (i) ոլորտի միասնականացված կառավարում, որը հիմնվում է ակտիվների խելամիտ կառավարման վրա, (ii) արդյունավետ ֆինանսական կառավարում և ֆինանսավորման լրացուցիչ տարբերակների ներգրավում, և (iii) երկու ոլորտների պատկան մարմինների և գերատեսչությունների պատասխանատվությունների, գործառնությունների և հաշվետվողականության ներդաշնակեցում, ինչը կօգնի հասնել ոլորտի թիրախներին: Կառավարությունը համագործակցություն է հաստատել զարգացման գործակալությունների և մասնավոր հատվածի հետ՝ բարելավելու ճանապարհային ենթակառուցվածքները և ջրամատակարարումը, բայց այս ոլորտներում գնահատված կարիքները մեծապես գերազանցում են կարիքների բավարարման համար առկա ռեսուրսները: Կառավարությունը համագործակցություն է հաստատել զարգացման գործակալությունների և մասնավոր հատվածի հետ՝ բարելավելու ճանապարհային ենթակառուցվածքները և ջրամատակարարումը, բայց այս ոլորտներում ներկայիս կարիքները մեծապես գերազանցում են կարիքների բավարարման համար առկա ռեսուրսները: Ծրագիրը կօգնի ուժեղացնել արդյունքների վրա հիմնված կառավարման համակարգերը՝ վերացնելու ոլորտի կառավարման սահմանափակումները և լուծելու ճանապարհային և ջրային ոլորտների զարգացման գերակա խնդիրները: Առանձին ոլորտների համար պատասխանատու նախարարությունների և Ֆինանսների նախարարության համար ծրագիրը նաև ներմուծում է այնպիսի միջոլորտային մոտեցում, որը կվերաբերի արդյունքների վրա հիմնված կառավարման բոլոր չորս մակարդակներին՝ պլանավորմանը, բյուջետավարմանը, իրականացմանը և մշտադիտարկմանը ինչպես յուրաքանչյուր ոլորտի ներսում, այնպես և ոլորտների միջև: Ծրագրի շրջանակներում ԱԶԲ-ը կգործակցի Էկոնոմիկայի նախարարության (ԷՆ) հետ՝ ոլորտների զարգացման ծրագրերը և երկրի զարգացման թիրախները ներդաշնակեցնելու նպատակով, Ֆինանսների նախարարության (ՖՆ) հետ՝ համապատասխան ծավալի ռեսուրսների մոբիլիզացման և օպտիմալ հատկացումների ապահովման նպատակով, Տարածքային կառավարման նախարարության (ՏԿՆ)

---

հետ՝ ջրային ոլորտի և մարզային ճանապարհների մատվ և Տրանսպորտի և կապի նախարարության (ՏԿՆ-2) հետ՝ ճանապարհային ցանցի մատվ:

---

## ■ **Զարգացման գործընթացի վրա ազդեցություն**

---

Ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ոլորտներում ծառայությունների բարելավված մատուցում:

---

## ■ **Օրագրի նվաճումները**

---

Նվաճումների նկարագիր	Նվաճումներին հասնելու ուղղությամբ արվող քայլերը
Ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ոլորտներում կիրառվող արդյունքների վրա հիմնված կառավարման համակարգեր	–

---

## ■ **Արդյունքներ և իրականացման առաջընթացը**

---

Օրագրի արդյունքների նկարագիր	Իրականացման առաջընթացի նկարագիր (Արդյունքներ, միջոցառումներ և խնդիրներ)
1. Ոլորտների կառավարման բարելավված համակարգեր 2. Ռազմավարություններ և գործընթացներ՝ ուղղված ներդրումների վերաբերյալ որոշումներում հատկացումների ավելի մեծ արդյունավետությանը 3. Կարգավորման շրջանակների բարելավում 4. Մշտադիտարկման համակարգերի ուժեղացում	–
<b>Զարգացման նպատակների կարգավիճակը</b>	<b>Զգալի փոփոխություններ</b>
–	–

---

## ■ Բիզնես հնարավորություններ

Առաջին լիստինգի ամսաթիվը	–
Խորհրդատվական ծառայություններ	–
Գնումներ	–
Գնումների և խորհրդատվական ծառայությունների մասին ծանուցումներ <a href="http://www.adb.org/projects/46220-001/business-opportunities">http://www.adb.org/projects/46220-001/business-opportunities</a>	

## ■ Ժամանակացույց

Հայեցակարգի ընդունում	2013թ. նոյեմբերի 11-ը
Փաստահավաք առաքելություն	2013թ. նոյեմբերի 04-ից մինչև 2013թ. նոյեմբերի 15-ը
Տնօրինության կողմից քննություն	–
Հաստատում	–
Քննության նպատակով վերջին առաքելություն	–

## ■ Հիմնական փուլերը

Հաստատման համարը	Հաստատում	Ստորագրում	Ուժի մեջ մտնելը	Փակում		
				Սկզբնական	Վերանայված	Փաստացի
–	–	–	–	–	–	–

## ■ Օգտագործում

Ամսաթիվ	Հաստատման համարը	ԱԶԲ (հազար ԱՄՆ դոլար)	Այլ աղբյուրներ (հազար ԱՄՆ դոլար)	Զուտ տոկոսներ
<b>Ընդամենը կնքված պայմանագրեր</b>				
–	–	–	–	–
<b>Կուտակային մասհանումներ</b>				
–	–	–	–	–

## ■ Պայմանների կարգավիճակը

Պայմանները դասակարգված են ըստ հետևյալ դասերի. աուդիտն անցած հաշիվներ, երաշխիքներ, դասեր ըստ ոլորտի, հատվածի, ֆինասական, տնտեսական և այլն: Պայմանների համապատասխանությունը գնահատվում է ըստ դասի, կիրառելով հետևյալ չափանիշները. (i) Բավարար՝ առկա է համապատասխանություն այս դասի բոլոր պայմաններին, թույլ է տրվում մաքսիմում մեկ բացառություն, (ii) Մասամբ բավարար՝ առկա է այս դասում մաքսիմում երկու պայմաններին անհամապատասխանություն, (iii) Անբավարար՝ խախտվում են երեք կամ ավելի պայմաններ այս դասում: Համաձայն 2011թ. Հանրության հետ կապերի քաղաքականությանը, պայմանների համապատասխանության գնահատումը ԾԱՆ-երի համար կիրառվում է միայն այն ծրագրերի նկատմամբ, որոնք հրավիրվել են բանակցությունների 2012թ. ապրիլի 2-ից հետո:

Հաստատման համարը	Դաս						
	Ոլորտ	Սոցիալական	Ֆինասական	Տնտեսական	Այլ	Երաշխիքներ	Ծրագրի ֆինասական հաշվետվություններ
–	–	–	–	–	–	–	–

## ■ Պատասխանատու անձանց կոնտակտային տվյալներ և թարմացված տեղեկություններ

Պատասխանատու պաշտոնյա ԱԶԲ-ում	Եշիմ Մ. Էլհան-Քայալար (yelhan@adb.org)
Պատասխանատու վարչություն ԱԶԲ-ում	Կենտրոնական և արևմտյան Ասիայի վարչություն
Պատասխանատու բաժին ԱԶԲ-ում	Հանրային կառավարման, ֆինանսական ոլորտի և առևտրի բաժին, Կենտրոնական և արևմտյան Ասիայի վարչություն
Իրականացնող գերատեսչություններ	–

## ■ Հղումներ

Ծրագրի էլեկտրոնային կայք	<a href="http://www.adb.org/projects/46220-001/main">http://www.adb.org/projects/46220-001/main</a>
Ծրագրի փատաթղթերի ցանկ	<a href="http://www.adb.org/projects/46220-001/documents">http://www.adb.org/projects/46220-001/documents</a>